


ԲԵՐԱԿՈՆԵՅԱՆ ԱՅԿԱԿՈՆ



**ՍԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱՐԱԹԱԹԵՐԹ**

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐԶԸ ԱՄԵՆՈՐԻ ԱՌԻՌՈՎ

Միջին բարեպաշտ ժողովուրդ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինից ողջունում ենք ձեզ ի Հայրենիս եւ ի Սփյուռս եւ բերում ամենբերիկ Հայրապետական Մեր սերն ու օրհնությունը:

Նոր տարվա շնին ենք, երբ նորի, ավելի լավի սպասումով անդրադառնում ենք եւ անցնող տարվան, եւ հատկապես՝ ապագայի մեր ծրագրերին ու հույսերին:



Այս պահին գոհությամբ աղոթք ենք բարձրացնում երկինք, որ Տերը պարգևեց մեզ խաղաղության մեջ մեր կյանքը կառուցելու, դեպի ձեռքբերումներ ընթանալու, հնարավորություն՝ բարիք ստեղծելու, բարին գործելու եւ բարու մեջ հաստատվելու՝ յուրաքանչյուրս առանձին եւ բոլորս՝ իբրեւ քրիստոնյա ժողովուրդ՝ Հայ Եկեղեցի, Հայոց պատույթին:

2006 թվականն էլ ապրեցինք մեր Հայրենիքի ու համայն մեր ժողովրդի միացյալ ու յուսալից գալիքի հանդեպ հավատով: Աստուծո օգնությամբ ներդրումների ու դժվարությունների առջեւ չուկարացանք, մեծ ու փոքր փորձություններ հաղթահարեցինք, ձեռքբերումներ ունեցանք եւ դեռ ճանապարհի պիտի անցնենք դեպի մեր ժողովրդի ցանկալի բարեկեցություն, դեպի մեր բոլոր հույսերի մարմնավորում:

Մեր հաջողությունները, ինչ որ ունեցանք Հայրենիքում եւ Սփյուռքում՝ հմարավոր եղան միայն մեր ժողովրդի սամառն ջանքերով ու միասնական տեսլիքով, առ Հայրենիքն ունեցած սիրով ու նվիրումով: Այսպես, այս ոգով 2006 թվականին տոնեցինք Հայաստանի եւ Արցախի անկախության 15-րդ տարեդարձը: Մայր Հայրենիքում գումարվեց «Հայաստան-Սփյուռք» համաժողովը, Ռուսաստանում եւ Ֆրանսիայում անցկացվեցին Հայաստանի տարվան նվիրված միջոցառումներ, կյանքի կոչվեցին հայրենաշեն ծրագրեր ու միասնաձեռնություններ: Արցախի մեր ժողովուրդը իր ազատ, նոր կյանքը կառուցելու հավատով ու վստահությամբ ընդունեց Սահմանադրությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության:

2006 թվականը հիշարժան ձեռքբերումներով նշանավորվեց մաեւ եկեղեցական մեր կյանքում: Հայրենիքում եւ Սփյուռքում իրենց դռները բացեցին վերանորոգված ու նորակառույց եկեղեցիներ, հռչակվեց Ֆրանսիայի հայոց բենը, ծառայության կոչվեցին բազմաթիվ եկեղեցականներ, եւ անմիջապես ջանքեր՝ հոգալու հոգեւոր կարիքները մեր ժողովրդի եւ արթուն ու գորացյալ պահելու հավատը մեր կյանքում:

Հարուսակությունը՝ էջ 2

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏՎԱԾՍԸ ՍՈՒՐԲ ԾՆԵՂՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՒՆԻ ԱՌԻՌՈՎ

(Սուրբ Էջմիածին, հունվարի 6, 2007 թ.)

Յամուն Հօր եւ Որդայ եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն:

«Եթէ մէկը Քրիստոսի մէջ է, նա նոր արարած է»

(Բ Կորնթ. Ե 17)

Սրբին բարեպաշտ հավատացյալներ Այսօր տոն է Սուրբ Ծննդան, տոն է Աստվածահայտնության մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի: Մեծ ու սքանչելի է խորհուրդը, որը մենք վերստին ապրում ենք այսօր: Նոր Արքայ ծնվեց Բերդեհեմում՝ համուն նորոգ մարդու եւ նոր աշխարհի, քանզի «Եթէ մէկը Քրիստոսի մէջ է, նա նոր արարած է»:

Հայոց Բերդեհեմից, յույս խորանից Սուրբ Էջմիածնի, հոգեմորոգ զգացումներով եւ բերկրամբ բերում ենք ձեզ մեծ ավետիսը, որը շուրջ երկու հազար տարիներ առաջ հովիվներին տվեցին իրենց տակները. «Այսօր Դաւիթ քաղաքում ձեզ համար ծնունդ մի Փրկչի, որ օծաւ Տերն է» (Լուկ. Բ 11):

Հովիվները պարզ ու մաքուր սրտով Բերդեհեմի մատուռն ճանաչեցին ու երկրպագեցին Մանուկ Փրկչին, իմաստուն մոգերը ընծաներ մատուցեցին՝ ծննդաբերով Նրա Աստվածությունը, Թագավորությունն ու Քահանայությունը:

Փրկչի գալուստը՝ մախապես վկայված մարգարեների միջոցով, ավետեց բոլորին, քայց բոլոր սրտերում չէ, որ Աշխարհի Փրկչի, Նոր Արքայի ծնունդը ցնծությամբ ընդունվեց: Մանուկ Հիսուսին սպանելու նպատակով Հերովդեսը կոտորել տվեց Բերդեհեմի մանուկներին: Այդ, սիրելիներ, Աստվածորդու մարդեղացու մեծ ու ծնունդը մույնիսկ ուղեկցվեց աստվածաշաշտության եւ սպանության, խաղաղության ու պատերազմի իրողություններով, որոնք Արեւիք եւ Կայենից սկսած զուգահեռ ընթացքով դրսևորվում են մարդկության պատմության մեջ: Բերդեհեմի մատուռն ծնված Մանուկ եկալ փոխելու աշխարհի այդ ընթացքը Նոր

Հունվարի 6-ին աշխարհափյուռ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց մեր Տեր եւ Փրկչի Հիսուս Քրիստոսի Սբ Ծննդան եւ Աստվածահայտնության հրաշափառ տոնը:

Նախորդ օրը՝ հունվարի 5-ին, հավաքու երեկոյան ժամերգության, մատուցվեց ճրագալույցի Սբ Պատարագ: Պատարագին էր Տ. Ներսէս արք. Պողոպայանց: Պատարագից հետո կատարվեց Նախատոնակ, որի ավարտին Նորին Սրբությունն ավետեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդան ու Աստվածահայտնությունը, իսկ հունվարի 6-ին մատուցեց Հայրապետական Սբ Պատարագ եւ իր պատգամը հղեց համայն հայությանը: Հավաքու Սբ Պատարագի Նորին Սրբությունը կատարեց Ցորիների արարողություն՝ իբրեւ Քրիստոսի Մկրտության խորհրդանշի: Ցորիներից խաչի կնքահայրն էր կոմպոզիտոր Տիգրան Մանասյանը:

Սբ Պատարագին եւ Ցորիների արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ Նախագահ Տիգրան Քոչարյանը, ՀՀ Նախարարներ, պետական այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, գիտության ու մշակույթի նվիրյալներ:

Սրբազան Պատարագից հետո Վեհարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:



Ուխտի հաստատումով եւ Իր արյան հեղուկով. «Այս է Նոր Ուխտի իմ արհիւնը, որ կը թափուի շատերի համար» (Մարկ. ԺԴ 24),- առաջ Քրիստոսը: Փրկիչը եկալ ազատելու մարդուն չարի որոգայթներից, մեղքի ու մահվան կապանքներից եւ աստվածային Իր գործությամբ վերականգնելու նրան դրախտային երանա-

կան իր փառքի մեջ: Քրիստոս նոր կյանք բերեց աշխարհին՝ վերածնված, նորոգված հոգու կյանքը, որով մարդկությունը պիտի ընթանա դեպի Աստված: «Հագե՛ք նոր մարդը,- պատգամեց առաքյալը,- նոր մարդը, որ տեսնուած է բառ Աստծո՝ արդարութեամբ եւ ճշմարիտ սրբութեամբ» (Եփ. Գ 24):

Մարդկությանն ուղղված նորոգվելու եւ կատարելագործվելու կոչը, սակայն, ամբողջապես վերջ չդրեց իմն մարդու, հին հասկացությունների գոյությանը, եւ չվերացավ չարիքն աշխարհից: Այսօր էլ համայն նոր մարդու կերպարի ներքո գործում է հին մարդը, Քրիստոսին երկրպագող հովիվների եւ մոգերի բարեպաշտության կողքին տեղ է գտնում նաեւ Հերովդեսի չարագործությունը: Կյանքի առաջագմաց պայմաններով, հնարավորություններով ու կարողություններով հատկանշվող արդի աշխարհը դեռ ամբողջ էլ չէ վառարանվել, արհավիրքներից ու պատերազմներից, ամբողջված չէ կեղծիքից, մախանձից ու ատելությունից: Մարդը բարձրագույն տիեզերք, քայց որբա՞ն է քարձրացել իր ներաշխարհի տիեզերքում: Գիտական մտքի զարգացումը նպաստել է կյանքի քաղաքականությանը, քայց որբա՞ն կատարելագործել է նաեւ պատերազմի զենքերը:

Հարուսակությունը՝ էջ 2



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ՇՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱՏԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ ԱՌԻԹՈՎ

Ալիգոր՝ էջ 1
Արդյունավոր եղավ նաեւ համա-գործակցությունը Զույր Եկեղեցիների հետ՝ ի սեր ժողովուրդների բարի հա-րաբերությունների եւ աշխարհում խաղաղության հաստատման:

Փառք Երվանդոսին, որ պարգևեց մեզ ևորոգված հույս ու հավատ:

Նոր տարի է ակիգր անում, «ու-րեմն»- ինչպես առաքյալն է ասում, «ք-սեք լավ եւ թե ինչ է Աստծո կամը» բարին եւ հաճելին եւ կատարյալը» (Հոով. 12:2), եւ քայլեք Աստծո կամ-ը, բարին ընտրելով՝ կատարյալին ձգտելով, եւ Աստված պիտի օրհնի մեր ջանքերը՝ ստեղծելու եւ կառուցելու, բարոր ու շն հարձեղելու հայրենի մեր երկիրը, մեր հայրենի ժառանգությունը, գիտության մեջ մշակույթով պայծառ ազգ մնալու եւ հարստանալու:

Տարեմուտի խորհրդանշանը այս պահին հորթը ենք բարձրացնում եր-կինք աշխարհասփյուռ մեր ժողովրդի գավակների համար: Արդյուն ենք Հա-յոց Բանակի քաջարի զինվորների ու սպաների համար, ովքեր այս պահին մեր երկրի սահմանների պաշտպանու-թյան դիրքերում են, բոլոր նրանց հա-մար, ովքեր Նոր տարին դիմավորում են իրենց ծառայության մեջ: Արդյուն ենք հիվանդների, նեղյալների ու կա-րիքավորների համար եւ հայցով Բարձրալի օրհնությունը, ամենա-ռառ շնորհն ու զորակցությունը մեր կյանքին:

Սիրելի հավաքավոր գավակներ մեր, թող հաստատուն ու գործել լինի հավատը մեր սրտերում, եւ մեր գործե-րը ուղեղությունը կյանքի կոչվեն ի սեր Աստծո, ի սեր մեր Հայրենիքի ու մեր Սուրբ Եկեղեցու:

Թող Տերը խաղաղության մեջ պահպանի աշխարհը եւ մեր Հայրե-նի, պարգևի շնորհով, բարիքով եւ ուրախությամբ լեցուն օրհնյալ տարի: Շնորհավոր Նոր տարի:



Ալիգոր՝ էջ 1

Արդարեւ, գիտատեխնիկական արդի նվաճումները, ժողովրդա-վարչությունը, անհատի եւ ազգի ի-րավունքներն ու ազատություննե-րը գերակա արժեքներ հռչակվա-ն գաղափարախոսությունները ան-բավարար եղան պատասխաններ տալու մարդկության առջեւ ծա-ռացող խնդիրներին ու մարտահ-րավերներին եւ անբավարար պի-տի լինեն, եթե Աստված ի ընակ-վում մեր մեջ, եթե Աստված չի գոր-ծում մեր կյանքում, եթե չեն կարե-ւորվում հոգևորը, հավատքը ու սրբությունը, այլ, նույնիսկ, ծաղի-րվում են: Ունայն պիտի լինեն խա-ղաղությանը, արդարությանն ու մարդասիրությանը ուղղված ջան-քերը, եթե նախ Աստծո բարեբար Կամը եւ Փրկության Ընդունը չենք հայցում, միմյանց սիրելու աստ-վածադիր պատվիրանը չենք կա-տարում:

«Մեր երբեք չի անհետանում, թե մարգարտություններ են, պիտի չքանան, թե լեզուներ, պիտի լռեն, թե գիտություն, պիտի անցնի, քան-զի շատից քիչը գիտենք եւ շատից քիչն ենք մարգարտանում» (Ա Կորնթ. ԺԳ-Ց-Ց), ասում է առա-քյալը: Մարդկային ամեն գիտու-թյունը շատից քիչն է եւ ժամանակի մեջ փոխվել ու փոխվելու է, քայլ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ՇՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱՏԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ ԱՌԻԹՈՎ

սերն է, որ երբեք չի անհետանում, սերը միշտ նույնն է՝ կատարյալ, «չար բան չի խորհում, անիրաւո-թեան վրայ չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտութեան վրայ»: Մենք բոլորք՝ ազգեր եւ ժո-ղովուրդներ, մեկ սուրբ եւ կենա-րար ժառանգություն ունենք՝ Աստծո սերը արարածների հա-նգա: Աստված պիտի մեզ բողո-քիս անկախ որեւէ պատկանելու-թյունից, անկախ ազգությունից, համազմունքից, սեռից ու տարի-քից: Կատարյալ այդ սիրո վկայու-թյունը Փրկչի Հայտնությունն է աշխարհում: Սիրո նույն ոգով ա-ռաջնորդվելով միայն՝ մարդկու-թյունը պիտի կարողանա մոր լի-նը՝ նորագնացվող նաեւ աշխարհը: Մենք՝ քրիստոնյաներս, խոս-տումն ու հավատն ունենք, «թե՛ մէկը Քրիստոսի մէջ է, մա մոր ա-րարած է»:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ հայոց, ուրախությամբ ու նրախ-տագիտությամբ ընդունենք մեր փրկության պարգևը՝ Մարգարայ Աստվածորդուն: Նրան ապալի-նամք՝ որպիս մոր մարդ՝ արարա-րած ու երբայսիրությանը կա-ռուցենք մոր կյանքը Հայաստանի եւ Արցախի, հայրենաշունչ, ամուր ու հույսով լեցուն պանծից ազգա-յին կյանքը Սփյուռքում: Փրկչի հետ չախի երկնքը դժվարու-թյուններից ու խոչընդոտներից, եւ մեր ջանքերը իզուր չախի լինեն, այլ քաղցրահամ արդյունքներ պի-տի բերեն մեր Հայրենիքին եւ վե-րազարթոնք ապրող Սփյուռքին: Համազգային միասնությամբ մեր Տիրոջ ազատարար սիրով պիտի պաշտպանենք Արցախի մեր ժո-ղովրդի ազատ արարելու արդար ի-րավունքը եւ նորոգյալ հավատով պիտի մարմնավորենք եւ կյանքի կոչենք մեր բոլոր իղձերը, գաղթի

մեր հույսերը: Արդ, անաղարտ պանծից առաքելական սուրբ հա-վատքը մեր հայրենի եւ նրանց օ-րինակով ստեղծենք մնայուն ու հարատեւը:

Մեր Տիրոջ եւ Փրկչի Սուրբ Շննդան տոնի հոգեհորդ առի-թով Քրիստոսավաճող սիրով եղ-բայրական ողջույն ենք հղում Զույր Եկեղեցիների հոգևոր պե-տերին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Ա-բթոների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա Մեծի Տանն Կի-լիկեի Կաթողիկոսին, Երուսաղե-մի Հայոց Պատրիարք Ամենա-պատիվ Տ. Թորգոմ Արքեպիսկո-պոս Մանուկյանին, Կոստանդ-նուպոլսի Հայոց Պատրիարք Ա-մենապատիվ Տ. Մեսրոպ Արքե-պիսկոպոս Մուրաֆյանին: Հա-րապետական Մեր օրհնությունն ու սերն ենք բերում մեր Եկեղեցու ուխտապահ հոգեւոր դասին եւ ի սփյուռք աշխարհի համայն մեր ժողովրդին:

Սուրբ Շննդան ավանտով Մեր ողջույնն ենք բերում Հայաս-տանի Հանրապետության Նախա-

գահ Տար Բոքրեան Բնադրալին, Լեւոնյան Բարաբաղի Հանրապե-տության Նախագահ Տար Արկա-դի Դուկասյանին, հայոց պետա-կան ողջ ավագանուն, Հայաստա-նում հավատարմագրված դիվա-նագիտական առաքելությունների ղեկավարներին ու ներկայացու-ցիչներին:

Սիրելի բարեպաշտ ժողո-վուրդ, արդենք Նորածին Փրկչի սմարի առջեւ, որ Իր ամենա-ռառ շնորհներով նորոգվեն մարդ-կային հոգիները եւ ողորմության, խաղաղության, արդարության ու ճշմարիտ եղբայրության ճա-նապարհներով ուղորդելի ժողո-վուրդները կյանքը:

Հայցենք, որ Փրկչի մեր Տերը հավատով գործաշուր պահպանի մեր ժողովրդին եւ օրհնի մեր գոր-ծերն ու ջանքերը՝ ի փառս Նր Սուրբ Անվան, ի սեր եւ ի բարօրու-թյուն հայրենի մեր երկրի ու աշ-խարհակալական ազգին եւ ի պա-շտապանության մեր Սուրբ Եկեղեցու, ամեն:

Քրիստոս ծնալ ու յայտնեցաւ. Չեզ եւ մեզ մեծ աւետիս:



ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐՀ

Ալիգոր՝ 2005 թ թիվ 11-12, 15-18, 20-22, 24, 2006 թ թիվ 1-5, 11-19, 21-24

ԵՆՈՐՀՆԵՐԸ՝ ԶՐԻԱԲԱՐ

Տարիներ առաջ, սոցիալական ծանր պայմանների թելադրանքով, մեր ժողովր-դից շատերը վազում էին անտեղ, որտեղ կյուրթական օգնություն՝ սնունդ, հագուստ եւ ուրիշ այլ բաներ էին բաժանում, երբ էին կանգնում՝ ստանալու: Աստծո Նա-խախնամությամբ մենք այսօր ծնվել եք քրիստոնյա աշխարհում, մեր մեջ քարոզ-վում է ճշմարիտ եւ կատարյալ աստվա-ծային կրոնը, եւ ճշմարիտ եկեղեցու ծո-ցում Աստված ձերաբար բաշխում է Իր շնորհներն ու պարգևները՝ մարդկանց արժանացնելով հավիտենական կյանքի: Ուրեմն՝ օգովենք ընծեմված այս բացա-րիկ հնարավորությունից եւ մեր ժամա-նակից՝ սկզբնական շրջանում թեկուզ եւ մի փոքր հատված հատկացնելով աստ-վածային ճշմարտությունները ուսանե-լուն, շտապենք դեպի եկեղեցի՝ ստանալու մեզ բոլորիս խոստացված հավիտենա-կան կյանքը:

ԿՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կուսությունը մարդկային ամենամեծ առաքելությունն է: Սա վկայեց Նաեւ Քրիստոսը, երբ ասաց. «Երկնքի արքայու-թյունը նման է տառը կույսերին»: Այսօր ո-ւնենք այս մեծագույն առաքելությունը՝ հաճախ թերություն եւ համարում: Հով-

հան Ոսկեբերանն ասում է, որ հանդե-րձալ կյանքում մարդկանց փառքն ու պա-սեղ տարբեր է լինելու: Սա է վկայում Նաեւ Պողոս առաքյալը: Եվ սա կույսերի տեղը լինելու է բոլորից բարձր՝ հրեղեն երկն-քում: Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է, որ միայն կույսերն են խառնվելու հրեշ-տակներին՝ ձեւավորելով հրեշտակաց տասներորդ դասը, որովհետեւ կուսությու-նը հրեշտակների գործ է: Ավետարանա-կան առակում հինգ կույսերը կոչվում են



հիմարներ, մերժվում են Քրիստոսի կող-մից եւ չեն կարողանում մտնել Երկնքի արքայություն: Բայց ո՞րն էր արդյոք պատճառը. չէ՞ որ բոլորն էլ կույսեր էին, բոլորն էլ մեծ ճգնություն պահել էին այդ ամենամեծ առաքելությունը: Հիմար կու-յսերը չկարողացան վառ պահել իրենց լավատերերը: Լավատեր երեք բաներով է վառվում՝ կրակով, ձեռքով եւ պատրույգով: Եթե սրանցից մեկը պակասի, ապա կա-յսերը կհանգչի: Լույսը կուսության առա-քելությունն է, ձեռք՝ մարգարտությունը եւ ողորմությունը, իսկ պատրույգը՝ ճշմա-րիտ մտադրությունը: Այսօր շատերն ու-նեն այս մեծագույն առաքելությունը, Նաեւ մարդասեր են եւ ողորմություն են ա-նում, սակայն չունեն ճշմարիտ մտադրու-թյուն: Մինչ շատերի հայացքներն ուղը-ված են դեպի երկիր, քերտ են իրենց հո-գիները երկինք բարձրացնում: Հիմար կույսերը կրակն են, ովքեր մարմնավորը ցանկացան եւ դրանից էլ զրկվեցին: Բո-լորն էլ կույսեր էին, սակայն կենք մերժվե-ցին, որովհետեւ Քրիստոսն ասում է. «Այլ», կույս եք, բայց հիմար եք, աշխատեցի-ք, բայց վարձը չունեք, երկայնիսն հարսնա-ցաք, բայց զարդերը չպահեցիք»: Եվ այս մեծագույն առաքելությունն ունեցողները պետք է Նաեւ ճիշտ դիտավորություն ունե-նան, իրենց հայացքներն ու հոգիներն ուղ-ղեն դեպի Աստված եւ կուսեն, որ եր-ջանությունը հեղվում է իրենց վրա եւ մ-նեսված երանությունն են վայելելու Նաեւ հանդերձալ կյանքում: Եվ մնացած մար-դիկ պետք է խոսարկվեն ողջախոհու-թյունն իրենց մարգարիտ ամբարն, այս մեծագույն առաքելությունն ունեցող մարդկանց առջեւ, որովհետեւ, ինչպես ասվում է Հայտնության գրքում, կրակն փառավոր կերպով լինելու են Քրիս-տոսի հետ, ուր էլ Նա գնա:

ՈՐԴԵՏՆՈՒԹՅՈՒՆ

Հովակիմը եւ Աննան երկար ժամանակ գավակ չունեին եւ արդթներով խնդրում էին, որ Աստված իրենց են գավակ պարգե-լի: Եվ աստվածային Նախախնամությամբ լույս աշխարհի կեպ մի մանկիկ, ով հետա-գայում, ինչպես մեր գեղեցիկ շարականե-րից մեկն է շատ պատկերավոր կերպով ա-սում, արեւելք եր դառնալու աստվածային Ա-րեգայի համար, այսինքն՝ լինելու էր Աստծո Միաբնի Որդու մայրը: Աստվածաշնչյան ի-մաստունն ասում է. «Տիրոջ օրհնությունն է խոստացնում»: Այս արտահայտությունը պետք է հասկանալ թե՛ մարդու հոգեւոր աշ-խարհի հարստացման եւ թե՛ հենց գավակ-ներով հարստանալու իմաստով:

Մեզ երբեմն հուզում է այն հարցը, թե ին-չու որոշ մարդիկ երկար ժամանակ անգավակ են մնում, ինչպես Սուրբ Աստվածածնի ծնո-ղները: Եվ մենք էլ փորձում ենք այս հարցի պա-տասխանը գտնել՝ միայն բժշկության տեսա-կետից եկելով: Սակայն տեսենք, թե Աստվա-ծաշնչում ինչ է ասվում այս մասին: Շնորոգ զրեցի հայտնի է, որ Արքայախան Բախակիկն ունեցավ Աստծո խոստման համաձայն: Երբ սատանայի փորձության պատճառով վախ-ճանկեցին երանելի Յոթի գավակները, Նա ա-սաց. «Իմ մոր որովայնից եւ մերկ դուրս եկա, մերկ էլ կվերադառնամ: Տերը տվեց, Տերն էլ հետ առավ»: Այսինքն՝ Յոթը եւ շնչաւում էր այն փաստը, որ Տիրոջ Տեր տեսցել իր գա-վակներին: Սրա հակառակ իրողությունը Նույնպես առկա է Աստվածաշնչում, երբ Աստ-ված տարբեր կապույտներով ոմանց որոշ ժամանակ գրկում է որդե՛սնությունը: Շնորոգ զրեւմ է Ռաբելի ու Հակոբի պատմությունը: Երբ Ռաբելը տեսավ, որ ինքը որդի չի ունե-ւում, իր անվանումը՝ Հակոբին, ասաց. «Ինձ գավակներ պարգեւիր, այլապես կվե՛նես»:

Շարունակությունը՝ էջ 4

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ԳՐԻԳՈՐ Դ ՏՂԱ

(1173-1193)

Հայտնի է, որ մահանալիս Ներսես Դ Շնորհալի կաթողիկոսը կարգադրել է կաթողիկոսական աթոռ բարձրացնել Տղա մականունը կրող Գրիգորիսին, որը նրա ազգը եղբորորդին էր եւ այդ ժամանակ Հռոմկլայից հեռու էր, քանի որ հայրապետական առաջադրանքները կատարելու նպատակով գտնվում էր Կրիկիայում եւ, թերեւս, աշխատում էր հաշտեցնել Մելի Ռուբիկյանին ու Հեթումին՝ փորձելով վերջ տալ միջավատատիրական պայքարին եւ պատերազմին։ Մ. Օրմանյանը հաված է կարծելու, որ այդ ժամանակ էլ եղել է Լամբրոնի պաշարումը։ Միխայել Ասորիի անգամ կարծում է, որ Գրիգորիս Տղայի բացակայությունից օգտվելով՝ Գրիգոր Ապիրատը տիրում է կաթողիկոսական մատանուն եւ իրեն հռչակում հայրապետ։ Նա արգելում է Գրիգորիսի կամ Գրիգոր Տղայի մուտքը Հռոմկլա, սակայն վերջինս դիմում է իր փեսային՝ Մելի իշխանին, որն իր բարեկամ սուլթան Նուրեդդինի օգնությամբ գահընկեց է անում Ապիրատին եւ Գրիգոր Տղային հաստատում կաթողիկոսական աթոռին։ Ասորի պատմիչը, որ ուրախ էր Գրիգոր Տղայի հայրապետանալու համար, նրան համարում է «այդ գովելի եւ գիտնական», որը փոխվել էր կաթողիկոս դառնալուց հետո։ Նա խորհուրդ էր տալիս հայոց կաթողիկոսին, որ երեւելի ու հռչակավոր եւ պարկեշտ հայ ազգի վրայից վերցնի ար-

ծաթաքերի կեղտը։ Այս հարցում, իհարկե, կաթողիկոսի մեղքը փոքր էր, եւ թեթ ուզե՞նար էլ, չէր կարողանա արծաթափրկության առաջն անել։ Միխայել Ասորիի միջնորդում է հայոց կաթողիկոսին, որ Գրիգոր Տղան Ապիրատին պատվով պահի ու նրան արժանի պաշտոն տա։ Այդ ձեռով Գրիգոր Ապիրատը նշանակվում է Լամբրոնի արքեպիսկոպոս։

Յավոք, հայ պատմագիրներից ոչ մեկը չի հաստատում Միխայել Ասորու տեղեկությունները՝ դրանով իսկ կասկածի տակ առնելով դրանց վավերականությունը։ Նրանց հաղորդումների համաձայն՝ Գրիգոր Տղան դիմադրության չի հանդիպել եւ հաջորդել է կաթողիկոսական աթոռին խաղաղությամբ։ Հայ պատմիչները հավատաւոր են նաեւ, որ Գրիգոր Ապիրատը մշտապես գործեց Գրիգոր Տղայի օրոք, եւ երբեք խնդիրներ չնազեցին։ Ավովք, կամա թե՛ ակամա, կասկածի տակ է առնում Միխայել Ասորու վկայությունը։ Անգամ այն իրողությունը, որ, համաձայն Վարդանի, Գրիգոր Տղան հայրապետացել է սուլթան Նուրեդդինի օգնությամբ, իսկ Ապիրատը մեկնել է Լամբրոն՝ հովվապետելու, ոգին չի ապացուցում, որովհետեւ նա ոչ մի ակնարկ չունի նրա մերժված լինելու մասին։ Հռոմկլայի կաթողիկոսարանը գտնվում էր Հայեաի սուլթանների հովանավորության ներքո, հետեւաբար կաթողիկոսի ընտրությունը չէր կարող կատարվել առանց Նուրեդդինի ձեռնավորության։ Ուստի, ի մի բերելով վերն ապավոն, պետք է համաձայնել Մ. Օրմանյանի հետ, որ, թերեւս, օգտվելով Գրիգոր Տղայի բացակայությունից՝ Գրիգոր Ապիրատը տեր է դարձել կաթողիկոսական կնիքին եւ հայրապետանոցին՝ առանց կաթողիկոս հռչակվելու կամ օծվելու։ Գուցե եւ Ապիրատը հասնել իր նպատակին, սակայն Մելիի միջամտությունը կաթողիկոսական աթոռի համար մրցավեճի՝ երկու հորեղբորորդիների Գրիգորների միջեւ, կշեռքի տնարն իջեցրեց հոգևու Գրիգոր Տղայի։

Գրիգոր Դ Տղան, հավանաբար, կաթողիկոսական աթոռ բարձրացավ 1173 թվականի վերջերին։ Նրա ձեռնադրությանը մասնակցեցին Հռոմկլայի եպիսկոպոսները, որոնց մեջ էին ասորի եպիսկոպոսներ Գրիգորիոս Բետունի եւ Վասիլիա Ռապանցի։ Սրանց մասնակցությամբ թարմացվեց իսկ կարգը, որի համաձայն՝ կողմերը պատվիրակություններ էին ուղար-



Կում երկու եպիսկոպոսից բաղկացած հայոց կամ ասորից կաթողիկոսների ընտրության ժամանակ։

Գրիգոր կաթողիկոսին տրված Տղա մականունը մտածել է տալիս, որ նա կաթողիկոսական աթոռ բարձրացավ շատ երիտասարդ տարիքում, սակայն այդ բացատրությունը քննություն չի բռնում, քանի որ նա 1138 թվին, երբ հայոց գերության մեջ էր, դեռահաս պատանի էր եւ հորեղբայրների հսկողությամբ տարվում է Հռոմկլա՝ այնտեղ մեծանալով որպես կաթողիկոսի տղա։ Թերեւս այդ է պատճառ դարձել, որ նրան տրվել Տղա մականունը, քանի որ հայրապետ Նուրեդդինի նա առնվազն քսոստուն տարեկան էր։ Նա հաղթանակում էր, բարձրահասակ եւ գեղեցկատես, ինչը հատուկ է եղել Պախլավուններից սերած բոլոր կաթողիկոսներին։

Ներսես Շնորհալի կաթողիկոսի մահվան ժամանակ կրկին հրապարակ էր եկել երկու եկեղեցիների միության խնդիրը։ Բյուզանդական կայսր Մանվելը, հանդես գալով իր հռչակավոր իսկ առաջադրություններով, հայերից վճռական պատասխան էր ակնկալում՝ միաժողով կարծելով, որ հայերը չէին կամենա եկեղեցիների միությունը սպասվելիք հույները խաթարել, չնայած առաջարկությունների ծանրությունից նրանք տատամսել էին։ Կայսրը սպասում էր Արեւելյան եկեղեցիներ ուղարկված իր Ստեփանոս եպիսկոպոսի վերադարձին, որպեսզի տեղեկանար Շնորհի տրամադրություններին։ Ներսես Առաքելու մահը ծանր հարված եղավ կայսեր համար, քանի որ նա պարզամտորեն կարծում էր, որ հայոց կաթողիկոսն իրեն համակիր է։ Եվ որպեսզի գործը դարձնե չուրախ, նա անմիջապես Հռոմկլա ուղարկեց Թեոփիանոս մագիստրոսին, որպեսզի եւ Գրիգոր Տղային շնորհավորի հայրապետանալու առթիվ եւ միաժամա-

նակ նոր կաթողիկոսին հորդորի ու քաջալերի միության գործն առաջ տանելու հարցում։ Սակայն կայսեր պատվիրակը չկարողացավ հասնել իր նպատակներին, քանի որ Բյուզանդական կայսրության եւ Ռումի սուլթանության միջեւ պատերազմ էր մղվում, եւ ցամաքային ճանապարհները դարձել էին խիստ վտանգավոր՝ կայսերական պաշտոնյաների համար։ Չկարողանալով անձամբ գնալ Հռոմկլա՝ Թեոփիանոս իրեն հավատարիմ մի սուրհանդակի միջոցով կայսերական նամակն առաջեց հայոց կաթողիկոսարան։ Թեոփիանոս մագիստրոսը վերադարձավ Կոստանդնուպոլիս, որտեղ, սակայն, վարդապետը հանդիպել կայսրին, որը գնացել էր այլազգիների դեմ պատերազմելու։

Եթե հավատենք սկզբնաղբյուրներին, Գրիգոր Տղան խիստ ուրախ եղավ կայսեր նամակի համար, քանի որ ինքն էլ իր նախորդի նման անկեղծ ձգտում էր միության եւ շուրջված էր, որ կայսրն իրեն է վերաբերվում է հարգանքով եւ վստահությամբ։ Այն միտքն է արտահայտվել, թե Գրիգորը կողմ է եղել Քրիստոսի երկու քննության եւ երկու եկեղեցիների միության։ Սակայն Մ. Օրմանյանը բոլորովին համոզված չէ դրանում եւ գտնում է, որ Գրիգոր Տղան հազիվ թե հենց սկզբից հարած լինի քաղկեդոնականության։ Հարած լինելով եկեղեցիների միության՝ նա, սակայն, կատարելապես դեմ էր կայսրության առաջադրվելիքն ու պայմաններին եւ այդպես էլ մնաց այդ դիրքերում։ Կայսրն ուղարկված պատասխանում հիշյալ առաջարկների պայմանները մերժվեցին։ Նամակում միաժամանակ հաջողություն էր մարդվում կայսրը՝ անօրենքների դեմ պայքարում, այսպիսի հաջողություն, որ նա փառալուրացավ Հռոմկլա էլ գա եւ միության գործն ավարտի։

Նամակը կայսրին տարավ Կոստանդին անունով մի հույն քահանա, որն իրավասու էր գրվածքների համար նաեւ բանավոր բացատրություններ տալու։ Հայոց կաթողիկոսն այս կապակցությամբ խնդրում էր, որ խաչակիրների կողմից Աստիղը գրավվելու պատճառով Կոստանդնուպոլիս փախած Աստիղի պատարիարք Կյուրեղը Կոստանդինի Մեմֆիցի կամ Հերապոլիս (Ասորիք) արքեպիսկոպոս կամ մետրոպոլիտ ձեռնադրի։ Պատասխանում ուղարկվեց 1174 թվին, եւ Կոստանդին քահանան հանդիպեց կայսրին Փոքր Ասիայում՝ պատերազմական գործողությունների ժամանակ։ Կայսրը գլուխը խառն էր, ուստի նա հայոց կաթողիկոսի պատվիրակին ուղարկեց Կոստանդնուպոլիս՝ հանձնառարարելով սպասել մինչեւ իր վերադարձը։

Շարունակություն էջ 5



Սուրբ Ծննդյան եւ Ս. Հարություն տոներից հետո հայոց մեծ տարածված է եղել տնօրինների հոգեւոր-բարեպաշտական արարողությունը։ Այն իմիմադրվել է հարուցյալ Փրկչի կողմից, երբ Նա Հարությունից հետո մտնում է Վերնատուն եւ օրհնում Իր աշակերտներին (Մարկ. ԺԶ 14-18, Լուկ. ԻԴ 36-49, Հովի. Ի 19-23)։ Տնօրինների արարողությունը գալիս է դեռեւս առաքելական ժամանակներից, երբ առաքյալները Քրիստոսի Համբարձումից հետո, Նրա օրհնակով, շրջում էին տները՝ բոլորին տանելով Քրիստոսի Ծննդյան ու Հարության ավետիսը։ Նույն կերպ էլ առաքյալների հետեւորդները՝ քահանաները, տարվա մեջ երկու անգամ՝ Ս. Ծննդյան ու Բարության (հունվարի 6-13) եւ Ս. Հարությունից մինչեւ Հոգեգալուստ, այցելում են իրենց վիճակված համայնքներին հավատացյալների տները եւ օրհնում նրանց բնակարաններն ու ընտանիքի անդամներին։ Քահանայի այցելության իմաստն օրինությունից առավել Քրիստոսի Ծննդյան ավետիսը ընտանիքներում սփռելն է։ Հայ եկեղեցում տնօրինների կարգ սահմանված է կատարել Ս.

ՏՆՕՐՀՆԵՔ

Ծննդյան եւ Ս. Հարության տոներից հետո, ինչպես նաեւ կատարվում է նորակառույց տան կամ հաստատության օրհնություն։ Ս. Ծննդյան տոներից հետո կատարվող տնօրինների ժամանակ քահանան, տուն մտնելով, տալիս է Փրկչի Ծննդյան ավետիսը, երգում Մովսես Խորենացու՝ Ս. Ծննդյանը նկիրված «Վերաբերվեց մեծ եւ սրանչեւի» շարականը եւ ընթերցում Դուկասի Ավետարանից Քրիստոսի Ծննդյան հատվածը (Լուկ. Բ 8-20)։ Քահանան օրհնում է տան ջուրը (մկրտության խորհրդանշան), հացը եւ աղը (խաղաղության, առատության, բարեպաշտության խորհրդանշան), ինչպես Քրիստոսը, աշխարհ գալով, օրհնեց ջուրը, երկիրը եւ նրա պտուղները։ Քահանան օրհնված ջուրը խաչածեւ ցուրն է տան պատերին եւ խնկարկում տունը։ Այնուհետեւ օրհնում է տան անդամներին՝ Աստծուց նրանց համար պահպանություն հայեցելով։ Որպես օրհնության համար տեսանելի եւ մնայուն նշանակ՝ քահանան սեղանին բոլ-

նում է տնօրինական պատկերով նշանակ, որը պահվում է ալյուրի կամ ձավարաղեղի մեջ՝ իբրեւ տվյալ տան ունեցվածքի առատության, բերրության եւ հաջողության նշան։ Ս. Հարության տոնից հետո կատարվող տնօրինների ժամանակ կատարվում է օրհնության նույն կարգը, սակայն երգվում է Ներսես Լամբրոնացու «Լյսոր յարեալ ի մեռեցոց» զատկական շարականը եւ ընթերցվում Մատթեոսի Ավետարանից հարուցյալ Քրիստոսի եւ Նրա աշակերտների՝ Գալիլիայում հանդիպման հատվածը (Մատթ. ԻԶ 16-20)։


Նորակառույց տան օրհնության ժամանակ երգվում է Սահակ Պարթևի՝ հոգեգալուստյան «Լյսոր երկնայինքն ուրախացան» շարականը, եւ ընթերցվում Դուկասի Ավետարանից Հիսուսի՝ Չակքեոս մարսապետի տուն այցելելու հատվածը (Լուկ. ԺԺ 1-10)։

Գրիգոր Տաթևացու բնորոշմամբ՝ տնօրինների արարողությունը Ինքը՝ Հիսուս Քրիստոսն է

տան, եւ նորակառույց տան օրհնությանը՝ փրկության արժանացած մարսապետի Չակքեոսի տան, որովհետեւ Աստված այցելեց այնտեղ։ Տնօրինների արարողությանը չաչեղեցին նաեւ արժեքներն ու կերպերն ունեցողները։ Հիսուսի, «Երբ Տերը տունը չլինի, ի՞նչու են չարչարվում այն շինողները, երբ Տերը քաղաքը չպահպանի, ի՞նչու են հսկում պահապանները նրա» (Մարկ. ԻԶ 1)։

Գ. Ա.





Սկիզբը՝ 2006-ի թիվ 17-24

Մոգիլայից հետո միայն չափազանց սուր է նրա հիմնադիր գաղափարախոսների և մանավանդ կիրառող Ստալինի քննադատությունը: Թվում է՝ Լեո Կամսարը համաշխարհային այդ դաժնապետի մասին ինքն իրեն յուր մտորում է, արտակարգ որևէ ցուցն ու ցայտուն բան չի ատու, սակայն նրա «մեղմ» խոսքի մեջ խտացված է բռնակալի կերպարը՝ ժողովրդին «պարզեցում» իր բոլոր տառապանքներով ու սարսափներով: «Եթե այսպես շարունակվի»- գրել է նա,- շուտով ողջ խորհրդային ժողովուրդը կդառնա Ստալինի արձան՝ կեսը մե, կեսը բարե»:

Ավելին, գեղարվեստական պայմանականության տարբեր ձևերի, երգիծանքի անհնարաբեր միջոցների կիրառումով նա հասնում է արտակարգ պատկերավորության, որով էլ նրա երգիծական խոսքը դառնում է դիպիկ ու մոլորակալաց: Օրինակ՝ նա կարող էր Լևոնին դիմելով՝ առանց այնպիսիության ասել, «Եթե ստալինյան դաժնապետի համար մարդ է ստեղծում, նրանց յուրաքանչյուրին մի բան-բանսինե՛ք տարի ավելորդ կյանք պիտի տաս անակնկալ դժբախտի համար և դա չպիտի մոտարանա մարդու կյանքի դրա՛: Դա որպես ամենաճշգիտի ֆունդ կմնա բանտի ու արտոնի համար»:

Ստալինյան ժամանակվա պարզ մարդուն դու երկու կյանք պետք է տաս. մեկը գեղարվեստական, մյուսը ապրելու համար»:

Լեո Կամսարը իր կյանքի ամենամանր օրերն ապրել է Ստալինի իշխանության ժամանակ: «Մշակույթը ֆաշիստ չինա», «ցարերի գահն հափվել է» և այլն: «Մեղմ» կամ «կոմունիստ» արված չարեցանքները իրենց արվածությունը են Լեո Կամսարի իմաստավորումներով: Որքա՛ն համահունչ են չարեցանքն ուղղորդված Կամսարի բնորոշումները: Հենց որոն, նա Ստալինի մասին գրել է թե՛ նրա կենսագրության օրոք ե թե՛ նրա մահից հետո՝ դեռ ստալինիզմը չվերացած: Հենց նրա ժամանակ է Լեո Կամսարը

ՊԱՐՈՆՅԱՆԻ ԵՎ ՕՏՅԱՆԻ ԱՉԳԱԿԻՑ ԼԵՌ ԿԱՄՍԱՐԸ

իր մեկուսացվել ու ամիմն դատապարտվել, երգիծաբանի նրա հզոր տաղանդը ճգնվել է գուցե հենց նրա գիտության ու հրամանով: Ինքը գիտակցում էր դա. մեծ դաժնապետի մահվան տասնամյակի առիթով նրա «մեղմ» խորհրդածությունները՝ արտաքին մեղմության տակ բացցնում են բաղաբական երգիծանքի բացարձակ սրությունը: Գրողն ինչպե՛ս դառնացած պիտի լիներ կյանքից, իշխանություններից ու իշխանավորներից ու մանավանդ Ստալինից, որ գրեթե հետևյալ տողերը: Հազիվ թե ողջ համաշխարհային գրականության մեջ այդպիսի ատելության արժանազատ լինի որևէ բռնակալ:

1963, 10 օգոստոսի, չորեքշաբթի: «Ստալինի ողջ ժամանակը, ամբողջ 20-30 տարի, գլխի ու ցերեկ են մտածում էի այն մասին, եթե նրան բռնեն ու իմ ձեռքը հանձնեն» ես նրան ի՞նչ պատժով պատժեմ:

Այնքան մեծ ոճագործի համար աշխարհի ոչ մի օրենսգրքում պատիժ չի նախատեսված: Ե՛կտ ապա, ինչպես իմ ավանդի ջերմաչափ շինողները, չնախատեսելով, որ իմ վաճառ կարող է 43 աստիճան տարբերություն ունենալ, ջերմաչափը 42 աստիճանից են կառուցել իմ ինչև նայաթ:

Հա: Ուրեմն՝ ես ամբողջ 30 տարի Ստալինին պատիժ որոնեցի ու չգտա, իսկ հիմա՛ այսօր, երբ գտել եմ պատիժը, ցավոք սրտի Ստալինն արդեն մեռել է:

Գիտե՛ք ինչ պատիժ է գտած: Ասեմ. - Եթե այս րոպեին Ստալինին կենդանի իմ ձեռքը տային, ես նրան առանց մազաչափ խղճանարկվելու... կամուսնացնեի կնոջս հետ» (նույն տեղում):

5.

Որքան էլ ջանում էին կաշկանդել Լեո Կամսարին, փորձում էին նրան որսառնել ժամանակի գրական կյանքից, միևնույն է, նա ետանդով միջամտում էր 1920-30-ական թթ. գրական բանավեճերին, տարբեր գրական խմբակներում նրան «նորագույն» արվեստագրական գրականությունը ստեղծելու պայքարում գերակայությունը նվաճելու միջոցների միջոցով: Եվ կարելի էր այն է, որ նա չէր ընկալում հեղինակությունների առաջ, չէր խնայում անգամ ամենատաղանդավոր մարդկանց, հակառակ-համակառն ծաղրում էր այդ խմբակների գրական առաջնորդների մոլորությունները, եւ այդպիսով ծաղրվում էին նաեւ խորհրդային պետությունը ղեկավարող միակ կուսակցության վարած գրական քաղաքականությունը, նորագույն գրականության զարգացման վերաբերյալ որոշումներն ու բանավեճերը:

Խորհրդային իրականության մեջ կատարված, նորագույն գրականությունը ստեղծելու առաջին հետաքրքիր քայլերից մեկը 1922 թ. հունիսին Երևանում իրականացված «Երեքը» (Չարենց, Արուս, Վշտունի) խմ-

բակի ղեկարգչիան էր, որի վտանգավոր ու անընդունելի դրույթները քննադատեցին ժամանակի ողջամիտ գրական մարդիկ՝ Պ. Մակինցյանը, Արտ. Կարինյանը, Հար. Սուրխաբյանը և ուրիշներ:

Խիստ քննադատական ելույթներ ունեցավ նաեւ Լեո Կամսարը՝ մատնանշելով «Երեքի» տեսական դրույթների և պրոլետարական գրողների ստեղծած գործնական գրականության արատները: Մեկ տարի անց հռչակված մանիֆեստն ու նրա հեղինակների՝ Չարենց-Արուս-Վշտունի «սուրբ երրորդության» պատկերացումն ու նրանց հակապետությունները ներկայացված են, կարելի է

վարդավառ է մի պարբերությամբ.

Չարենցը մեռա՞վ է -

Մեռավ.

Որ պետք ծնվի նոր մի.

Թե՛քան, թե՛ բերքերի վրա

Իշարար շարեն ողորմի:

Այս պարբերության վերջին ընդգծված տողն էլ Լեո Կամսարը օգտագործել է իր ֆելիետոնի վերնագրում՝ «Իշարար շարված ողորմի (որ Չարենցը «բերք» վրան)»: Այն գրվել է 1923-ին և ընդգրկվել 1926 թ. լույս տեսած «Ազգային այբբենարան» գրքում:

Ուշադիր ընթերցողը ցույց է տալիս, որ այստեղ երգիծաբանը, Չարենցին խստորեն քննադատելով հանդերձ, բարձր է գնահատել նրա տաղանդը և միմեզ ղեկարգչիան հրատարակած գրքերը եւ նրա գործածած բառաբանքը ու անբույսարտի գեղեցիկ արտահայտությունների քննադատությունն էլ արել է սրտի ցավով. նրա գրական ապագայի հանդեպ խոր մտահոգությամբ: Դա ա-



Լեո Կամսարի տունը Երևանում

ասել, կամսարավարի: Հետաքրքիրն այն է, որ նա գրողներին ծաղրում է հենց նրանց խոսքերի մեջ եղած ծիծաղելի բացահայտումով: Ասեմք, ծաղրում է ղեկարգչիան, Չարենցի, Արուսի Վշտունու, Արազանի, Չարյանի և ուրիշների գործերը՝ հենց նրանցից վերցրած դարձվածքներն ու արտահայտությունները միախառնելով իր խոսքին, որով էլ վերջինս ձեռք է բերում անառարկելի հակասություններ ճշմարտացիությանը:

Լեո Կամսարը բնութագրում է Չարենցի՝ 1922-24 թթ. որոնումների շրջանի մի քանի գործեր՝ «Պոեզիոստ», «Ռոման ամսեր», «Կոմունիստական», որոնցից ընդամենը մի քանի տարի անց՝ արտասահմանյան ուղևորությունից հետո է ծանալանդ «Եպիկական լուսարագ» գրքում Չարենցն ինքը պիտի հրաժարվեր՝ դատապարտելով իր և գրչակների ծախ մոլորությունները:

Չարենցի «Ռոման ամսեր» պոեմն ա-

ռանձնապես երեսուն է նրա մի բնորոշ համեմատությունից.

«Վալույտիս: - Ինչպես պետություն մը իրավունք չունի իր ունեցած ոսկին ավելի քան քաղաքում քան բողոքելու՝ այնպես էլ անհատ մը չի կրնար ուզածին չափ անմաստ խոսքեր չլրացնել՝ առանց դիմացը իրական արժեք մը դրած լլալու: Հենցայիդ, որ 42 տարի իմաստուն բաներ է գրեր, իրավունք ունեւ նույնքան տարի ալ հիմար բաներ գրելու: (Ուրիշ բան է, որ չէ ուղեցնել իր հիմարության իրավունքն օգտվելու): Չարենցը անցելույն մեջ 7 պարկ շնորհալի բաներ է գրեր, դիմացն ունի 5 անցնելույն պարկեր: Դեռ երկու պարկ մը գրելու տեղ ունի» (Լեո Կամսար, Ազգային այբբենարան, Երևան, 1926, էջ 147, ընդգծ. մերն են - Ս. Մ.):

Չարունակելի Սամվել ՄՈՐՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ԽՈՐՀՈՒՐ

Սկիզբը՝ էջ 2

Եվ շատ հետաքրքրական է Յակոբի պատկերացումը. «Մի՞թե Աստուծո փոխարինողն եմ ես, որ գրել եմ թե՛ ծնողաբերություն»: Այնուհետև Աստվածաշունչն ասում է, որ որոշ ժամանակ անց Աստված հիշեց Ռաբբին, ասաց նրա թախանձագին արդեթների և բեմական դարձեց նրան: Յետեաբար՝ այս հարցում մեծ դեր ունի նաեւ հավատը, ինչը եւ տեսնում ենք հատկապես Աստվածամկն մոտերի՝ Յակոբի և Աննայի պարագայում: Երկիր մոլորակի վրա կենդանությունը, կյանքը պահպանում է ամենաբարեբաղ տարրերից մեկը՝ ջուրը: Այն կյանք է տալիս բույսերին և ապահովում է նաեւ մարդկանց ու կենդանիների գոյությունը: Գիտականությունից մեկի խոսքերով՝ ջրի գործադանակի հատկություններից մեկն այն է, որ մեկ կաթիլ ջրի մեջ այնքան ատոմ կա, որքան որ ջրի կաթիլ կա Միջերկրական ծովում: Սակայն կարող է արդյոք որեւէ մեկն ասել, թե որքան գոյություն կա մեկ կաթիլի հավաքածու: Այժմ, երբ եթե ջուրը կենդանություն է տալիս, ապա որքան առաջվա եւս կենդանություն կարող է տալ աստվածային հավատը:

ԶԵՆՈՒՆԵՐ ԳԵՂԱՐՈՒՄ

Սուրբ Բաբեյան Աստիճի եպիսկոպոսն էր: Նա կայսրին, չար գործերի եւ վարքի համար, քաղաքում արգելեց եկեղեցի մտնել: Այդ իսկ պատճառով իր երեք աշակերտների հետ միասին գլխատվեց: Նման միջադեպ եղել է նաեւ Յուսի կաթողիկոսի և Տիրան թագավորի միջեւ: 1957 թ. Երուսաղեմում իրադարձված «Հայաստանյայց եկեղեցու սրբերը եւ տոները» գրքի հիեղակ Թորգոմ պատմաբանը գրում է. «Մեր եկեղեցական պատմության մեջ Յուսիկը ներկայացնում է քաղաքական իշխանության գլխավոր ուժը: Երեմյա գաղթականի է թվում, թե ինչպես են մարգարեները կամ եկեղեցականները սխալների համար քաղաքում հանդիմանել թագավորներին: Հնդկաստանյայց ազատությունը կայանում է սահմանափակության մեջ: Եթե մի ուրուր իր գործունեության շրջանակներից դուրս գա եւ իր իշխանությունը տարածի նաեւ մեկ այլ ուրուր»:



տի վրա, ապա կտացվի մեկի ազատությունը բռնություն մեկ ուրիշի սահմանների ընդլայնման հաշվին: Այսինքն՝ յուրաքանչյուրն ազատ է իր սահմանների ներսում: Սահմաններից դուրս գալը նշանակում է ուրիշի սահմանների խախտում եւ ուրիշի

